ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիք մարզի Կարմիրգյուղ համայնք
ՀՀ, Գեղարքունիք մարզ, գ. Կարմիրգյուղ, 0(264) 6-06-96
karmirgyugh.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2019թվականի N 30

ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 67-րդ հոդվածի և 68-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Կարմիրգյուղ համայնքին սեփականության իրավունքով պատկանող վկայական N26082019-05-0014, 05-056-0313-0047 կադաստրային ծածկագրի տակ գտնվող Զոհրաբ Շհոյան փողոց 204 հասցեի 0.15 հա մակերեսով արդյունաբերության, ընդեքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ հողատեսքը աճուրդ վաճառքով օտարել և սահմանել մեկնարկային գին հողամասի կադաստրային արժեքի 50%-ի չափով 607500 /վեց հարյուր յոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, սակարկության քայլի չափ սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 30400 /երեսուն հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ, մուտքավճար սահմանել 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

2. Տալ համապատասխան հայտարարություն հողամասերի օտարման վերաբերյալ և օրենքով սահմանված կարգով կատարել աճուրդ վաճառք:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԲՈՋՈՅԱՆ ԱՇՈՏԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԵՈՆԻԴ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԲՈՒՐՄՈՒՆՔ
ՇՀՈՅԱՆ ՎԱՆԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՆԻԿ
ՕՀԱՆՅԱՆ ՆՎԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԳԱՍՊԱՐՅԱՆ